

ուսանեալսն Ժողովները փոխանակ վաճառու-
նեակէի՝ սխալները

Է, Այլ վճարել թէ՛ կարելի՞ է թոյլ տալ
զՄՆԷ աստիճանը իբրև հրահանգ մեր հոգևոր և
ճխական դպրոցներում՝ Հայոց Ահհափառ Հայ-
րապետի և Հոգևոր Էջնանութեան իրաւունքն է
այդ, և ոչ այլ ումեր: Ուստի Հայոց համար ե-
րրոյն հրատարակութեանց վերայ՝ թէ՛ կնկնեցա-
կան լինի, թէ՛ դասական և թէ՛ այլ նպատա-
կով և բովանդակութեամբ, սոցա պարտք և ի-
րաւունք է հսկել և Հայոց Ազգը զգուշացնել ի
կարևոր դէպու - Եթէ Պ. Նամակագիրն միանգամ՝
ակնարկէ ցարդ հրատարակիալ իւր հօր մի քա-
նի գրեանց ճակատներուն, սնշողչտ ինքնին կհաս-
կանայ իւր սխալը, որով Պ. Մտերի անուան վի-
րայ աւելի նախատինք կհերէ և նոյն իսկ Պ. Մտեր
իւր վերայ այնպիսի յանդուգն համարում և հա-
մարձակութիւն ունեցած է՛ ինչ որ նամակագիր
որդին կտքնի ունենալ տալ և ցուցանել, և ող-
ջափառ և ուսումնական անձինք քաջ զիտեն
յուէտ սանձարձակ չապաւինել միայն իւրեանց
մտաց և կարծեաց վերայ: - Լուսիման կյանձ-
նուին Լուսաշողի և ինչ համար մանկամիտ խօսքերը:

Ը, նա և այն ՄՆԷ աստիճանը իբրև դասադիրք
լինելոյ ոչ յարմարութիւն ունի և ոչ մեր դրպ-
րոցք այնպիսի դասազրքէ օգուտ կարեն քաղել:
- Գուցէ իբրև նոր հրատարակուած մի բան՝ հե-
տաքըրի անձանց ուշագրութիւնը շարժելոյ ծա-
ռայէ և միանգամ նոցա աչքի տակէն անցնի:

Յ Ա Ս Տ Բ Ա Խ Ա Ն Է .

Ի սթափրո-լեան Էրարար աճաափրոյ .

Աստրախանայ Հայոց ճխական երկսեռ Հոգևոր
Դպրոցաց Հոգաբարձութիւնը իւր կարգադրու-
թեան պէս սկիզբն առաւ տարեկան հարցարն-
նութեանց յՅ էն նախընթաց ամսոյ Յունիսի
ներկայ ամի և աւարտեց ի 26 նոյն ամսոյ Յերկ-
րորդ դասատներից աւարտեցին սահմանեալ ըն-
թացքը ուսմանց՝ հինգ աղջկունք և մի տղայ
որոնք և արձակեցան իսպառ պառոշաճեալ վկա-

յակնաւ: Յտաղին դասատներից փոխադրեցան
Երկրորդ դասատներ՝ ութ աղջկունք և եօթն
տղայք, և հարցարնութեան օրերումը ցուցած
յառաջադիմութեանց համար՝ պարգևատրեցան
գրինեօք տասն և եօթն երկսեռ ուսանողք: Չայս-
մանէ Հոգաբարձական խորհրդարանս Աստրախա-
նայ Հոգևոր Երկսեռ Հայոց Դպրոցաց ծանուցա-
նելով Խմբագրութեան՝ խոնարհաշար ինկրում է
տպագրել յէջս Արարատ ամապրոյ՝ լինել հանուր
գիտութիւն Ազգասէր և ուսումնասէր համազգայ-
նոց:

Հոգաբարձուք Յովսէփ Աւագ Բաննոյ Բուխութեանց
Սիմէոն Պոպովեանց,
Սարգիս Բուրջակեանց,
Գրիգոր Սոցոմունեանց:
Համար 49.
Յ 2 Յունիսի 1874 -ի
Ստաբուխն:

Հեռեկալին հրատարակութիւնը խըն-
դրուած է, զոր և շնորհակալութեամբ
արժան կհամարիմք հաղորդել մերազնէկոյ
ի գիտութիւն և ի մխիթարութիւն:

Ի նՈՐ - ՆԱԽԻՋԵՆԻԱՆԷ:

ՀԱՅԵՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԱՐԿԱՍԻՐԱ-
ԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ - ՆԱԽԻՋԵՆԻԱՆԻ ՎԱՍՆ
1875 ԱՄԻ:

Անցերորդ տարին է, որ Մարդասիրական Ըն-
կերութիւնն իւր հաստատման օրէն սկսեալ մին-
չև ցայսօր կշարունակէ անխափան իւր ընթացքը
և գործողութիւնը: Անցերորդ անգամն է այս, որ
Խորհրդարանս՝ ըստ ԺԵ յօդուածոյ կանոնադ-
րութեան Ընկերութեան՝ պատիւ ունի առաջի
առնել վերյարգի անգամնոց ընդհանուր ժողովոյս
իւր տարեկան հաշիւը յորում բացայայտ կտես-
նուին մի ըստ միոջէ Ընկերութեան 1873 թուա-
կանի մէջ ունեցած եկամուտքը և ծախքն, որ գոն՝

Ինչպէս կերևայ հաշուեմատենէն, որ գործ
դրված է ըստ կարգին՝ Ընկերութիւնս ի սկիզբն
1873 ամի ունէր դրամազուտ՝ յակելեալ ի ծա-
խուց նախընթաց ամի . . . 7730 78

Յընթաց 1875 - մի էլեւել են մեւոր+

Ի 190 անդամոց տարեկան բաժանորդագրիք 1140

Յջնահամաձայն անդամոց 18

Տոկոսի 18 պանքական և ներքին փոխառութեանց տուժանկաց 90

Համանձայն կտակաւանդութեան հանգուցեալ Աարայեօի Շիլիեանի Ժառանգաց նորին ընկալեալ է միանուագ 1000

Ի սիկնոջէ Գշխոյէ Շարշիկեանց (այժմ հանգուցեալ) վասն ստանձնեալոյ զանուն մշտնջենաւոր անդամոց ընկերութեանս ստացեալ է 120

Ի յիշատակ հանգուցեալ Յակոբայ Օրերեան ստացեալ է ի ժառանգաց նորին վասն ստանձնեալոյ զանուն մշտնջենաւոր անդամութեան 120

Արդիւնք պատրաստեան զրամագրիցն շահեցեալք ի ձեռն հոգարարձուաց Խորհրդարանիս 513

Տարեկան թոշակք 12 աշակերտոց 1800

Ի կառավարչէ վանուց անդամորում վասն ձրիաւ վարժ աշակերտաց 600

Ի թոշակաւոր աշակերտաց վասն զրեանց ստացեալ է 32 95

Ի վաճառմանէ վեց աւելորդ ակնոց Խորհրդարանիս 12

Ի Պ. Ստեփան Բորովէ հանդերձագին որդւոյ նորա 25

Ի Պ. Սիմեոն Արաճապեանէ հանդերձագին Պայպուրթեան աշակերտի 30

Բոլոր մոխց գումարն է 5500 95

Իսկ ընդ ամեն մոխց գումարն հանդերձ նակընթաց տարւոյ սկիզբն եղած զրամագրիսովն 13231 73

Իսկ ընդ 1875 - մի էլեւել են յետագայ:

Յուսումնական մասին,
 Ռոճիկք ուսուցչաց 1118
 Վասն դասական պիտոյից 134 94

Ի սնտեսական մասին,
 Ի սնունդ աշակերտաց և

Միաբանից վանուց 1342 51

Վարձ տնտեսի, խոհարարի, լուսարարի և ծառայի 468

Պատավաշին վանուց հատուցեալ է վասն ալերի պէտս թոշակաւոր աշակերտաց 110

Վասն հանդերձեղինաց և ագանեղեաց ի պէտս ձրիաւ վարժ աշակերտաց, որք են ամառնային և ձմեռնային հանդերձ, կտակեղէնք, զբլիսարկք և կօշիկք 390 89

Վասն կառավարութեան Խորհրդարանի այն է ուժիկ զործավարի, վարձք ծառայի, ծախք խորհրդարանի և տպագրութեան հաշուետետրաց վասն 1872 թ. 155 40

Ըստ կարգաւորութեան խորհրդարանիս, որ ի 13 Յունիսի 1873 ամի, հիմնեալ ի վերայ վճռոյ ընդհանուր ժողովոյն, որ ի 11 Ապրիլի 1872 ամի եղեալ են ծախք ի նորոգութիւն ժառանգաւորաց դպրոցին, այս ինքն վասն ընդարձակեղոյ զսնեակս ննջարանացն և ըն. 430 30

Բոլոր ծախուց գումարն է 4150 4

Յետ ի բաց հանելոյ ըզգումար՝ ծախուցն ի գումարէ տարեկան մոխց մնաց յաւելեալ առ մի Յունվարի 1874 ամի 1350 91

Բաց յայտմանէ գտանին Տասն տոմսակք առաջին ներքին փոխառութեան ընդ համարօք №№ 38, серия 16029, 16030 և 16031. №№ 39, серия 17098, 17099, 170100, 170101, 170102, 170103 և 170140*) 1300

Երկու տոմսակք երկրորդ ներքին փոխառութեան № 22, серия 15922, և № 46, серия 12081. 300

Վեց պանքական տոմսակք 5⁰ 595

Պատրաստի գում. զրամ. 5535 78 9081 69

Ծախուց գումարն բարդելով մնացած զրամագրիցն վերայ ընդ ամենն կլինի 13231 73

(*) Վերին թասնշանաց մէջ սխալներ կերևին, սակայն բնագրին մէջ այսպէս են և. Ի.

Ներկայացնելով ընդհանուր ժողովոյդ սոյն վերոյգրեալ Ընկերութեանս մտից և ելից հաշիւը՝ Խորհրդարանս այժմ պարտ վարկանի յառաջ բերել այս տեղ ի գիտութիւն մեծարոյ անգամացդ ըզքանի մի կարևոր գիտելիս վերաբերեալս թէ ժառանգաւորաց դպրոցին և թէ Ընկերութեանս նախ՝ յնթացս 1873 ամի բաց ի սովորական եկամտից մտեալ է յարկը Ընկերութեանս միանուագ՝ նշանաւոր գումար կտակեալ ի հանգուցեալ Կարապետէ Շիրիթեան հողը ուրբեաց Երկրորդ՝ ժառանգաւորաց դպրոցի համար յօրինուած նոր կանոնադրութիւնն, զոր Խորհրդարանս համաձայն կարգադրութեան ընդհանուր ժողովոյն Ընկերութեան, որ ի 13 Մայիսի 1873 ամի առաջի արարեալ էր Աւհափառ Կաթուղիկոսի Ազգիս և զոր նորին Ատուածընտիր Օծութիւնն բարեհաճեալ էր առանձին կոնդակաւ կատարել վասն գործադրութեան, արդէն իսկ գործ դրված է ի դպրոցին սկսեալ է ի 1 էն Սեպտեմբերի 1873 ամի ըստ ներելոյ այժմու դրութեան և հանդամանաց դպրոցին: Երրորդ՝ թոշակաւոր աշակերտաց թիւը այստարի պակսել է և պակսելու վերայ է որոյ պատճառն ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ ընդհանուր զինուորական ծառայութեան*) ազազաբազումք կերթան կամենն տէրութեան Բարձրագոյն ուսումնարանները, որ այնու առաւել իրաւունք ստանան զինուորական ծառայութեան մէջ, և այս պատճառաւ կարելի է աներկբայ ասել, որ ժառանգաւորաց դպրոցն ապագային չունենայ և ո՛չ մի թոշակաւոր աշակերտ յայն սակս Խորհրդարանս այս առարկայի վերայ դարձունելով ընդհանուր ժողովոյդ ուշադրութիւնը կենդրե, որ նորոգ ընտրուելու հոգաբարձուաց այժմէն իսկ յանձնել այդ մասին խորհել և որոնել պէտք եղած միջոցները, որովք ապագային ժառանգաւորաց դպրոցն՝ եթէ արդարև մնալու լինի առանց թոշակաւոր աշակերտաց՝ կարողանայ գոնէ առանց դժուարութեան կառավարուիլ և շարունակել զուսումն: Զորրորդ՝ ինչպէս վերը ի շարս ծախուց յիշուած է՝ Խորհրդարանս 1873 թուականին ընդարձակել և նորոգել տուել է ժառանգաւորաց

դպրոցի ննջարաններու սենեակները ի գործ դնելով առ այն՝ ըստ վճար ընդհանուր ժողովոյն զյաւելեալ 1871 ամէ 373 ուրբիս 96 կոպ. դումարն, որ չբաւականալով՝ հարկ եղաւ յաւելուլ այլ ևս 256 ուրբի 34 կոպ. որով ընդ ամենն ծախք շինութեանն եղին 430 ուրբ. 30 կոպ. Հինգերորդ՝ Խորհրդարանս, նոյնպէս և ժառանգաւորաց դպրոցի հոգաբարձուաց կրկամեայ պաշտօնատարութեան ժամանակն արդէն լրացած լինելով՝ կենդրե սա ընդհանուր ժողովոյդ անօրէնութիւնը, որ այժմ իսկ համաձայն ժ. յօդուածոյ կանոնադրութեան Ընկերութեան ընտրութիւն լինի նոր հոգաբարձուաց յիշատակեալ պաշտօններու համար:

Ի վերայ իսկականին ստորագրեալ են անդամք Խորհրդարանին:

ԿԱՐԳԱՌՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԱՆԿԱՄՈՅ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՆՈՐ-ՆԱՍԻՋԵՆԻԱՆ ԸՐ Ի 12 ՄԱՅՍԻՍ, 1874 ԱՄԻ:

Մեք ի ներքոյ ստորագրեալքս անդամք Մարտիրական Ընկերութեան Հայոց նոր նախիջլեանի ժողովեալ ի միասին վասն վերահաստութեան մտից և ծախուց Ընկերութեանս վասն 1873 ամի գտաք. - Ընկերութեան մատնաններն ի գործ դրված են ըստ կարգին. ք. տասն տոմսակք Առաջին ներքին փոխառութեան ի գումարն 1300 ուրբեաց երկու տոմսակք Բ. ներքին փոխառութեան ի գումարն 300 ուրբեաց վեց պանքական տոմսակք ի գումարն 595 ուրբեաց և յաւելեալ պատրաստի գումարն դրամոց 5535 ուրբեաց 78 կոպէկից գտանին ամբողջ աւ գանձապահն Ընկերութեանս: Կարգաւորեալն նախ՝ որովհետև հոգաբարձուաց խորհրդարանի ընկերութեանս լրացեալ է երկամեայ պաշտօնատարութեան ժամանակըն, վասն այն ընտրել ի տեղի նոցանոր հոգաբարձուս (որ և ընտրեցան) 1. զԽաչերես Ալաճաղեան, 2. զՏէր Խաչատուր Ա. քահանայ Զարիֆեանց, 3. զՅովսիփան Պոպոյեան, 4. զՅովհաննէս Զայլախեան, 5. զՅովհաննէս Աւթիքեան, 6. զտէր Սարգիս Քահանայ Ոսկերչեան, 7. զՄիքայէլ Մահատեան, 8. զՅովսիփոս Խաղիզեան, 9. զԿարապետ Հեքիմեան, 10. զՍտեփան Մարտիրոս

(*)

սեան Փոփոզ, 11, զՊօղոս Խաթրանեան և 12, զԽաչուկ Թիթրեան Երկրորդ՝ առաջարկել նորոգ ընտրեալ հոգաբարձուացն, որ ժառանգաւորաց գլխոցի և այլ հարկաւոր պետոցից համար ի գործ դնեն ներկայ 1874 տարուցս մէջ հիմնական և պատրաստական դրամագլխոց և բաժանորդագնաց անգամաց և կամաւոր նուիրանաց չորս մասանց երեք մասն համաձայն կանոնադրութեան Ընկերութեան՝ խորշելով որքան կարիք է աւելորդ ծախքերէն: Երրորդ՝ նոյնպէս յանձնել հոգաբարձուաց խորհրդարանի, որ այժմէն իսկ հոգ տանին խորհել և որոնել հարկաւոր միջոցները, որով ժառանգաւորաց զպրոցն կարողանայ կառավարվիլ առանց դժուարութեան՝ եթէ ապագային թողաւոր աշակերտք չլինին: Զորրորդ՝ նախկին հոգաբարձուաց յայտնել շնորհակալութիւն իւրեանց յանձն առած պաշտօնը սիրով և ջերմեռանդութեամբ կատարելուն համար, և Հինգերորդ՝ Խորհրդարանի մատուցած հաշիւը 1873 ամի հանգերձ այս ընդհանուր ժողովոյս կարգաւորութեամբը տալ տպագրել վասն ընդհանուր տեղեկութեան:

Ի վերոյ իսկականին ստորագրեալ են անդամք Ընկերութեան:

Ընդ իսկականին հաստատ է
 Նախագահ
 Յ. ՍԱԼԹԻՔԵԱՆ.

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ ԲԻԻԶԱՆԴԵԱՆ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ.

Աւրբաթ օր (Յուլիս 5) Ընդհանուր ժողով հրաւիրուած էր ի Ղալաթիա ժամ 6ին ատեան բանալու և ժամ 10ին ատեան զոցելու:

Ասկից առաջ հրաւերի ժամերուն ընաւ կարևորութիւն չէր տրուէր այս անգամ Ս. Պատրիարքը ժամը ձիշտ 6ին եկաւ բաղմեցաւ իւր նախագահական աթոռը, որ ատեն դեռ և ոչ մէկ երեսփոխան ներկայ կը գտնուէր. սակայն հետըզհետէ գալով մեծադոյն մասը գոյացաւ և ատեանը բացուեցաւ, Ատենապետութեամբ Միսաքեան Էֆէն ի, զի երեք Ատենապետներն ալ բացակայ

էին, և Ատենապարութեամբ Փափագեան Էֆէն տիրն:

Այս միջոցին հանրադիր մը մատուցուեցաւ Ս. Պատրիարքին՝ Փափագեան Էֆէնտիի ատենադպրութեանը դէմ: Ս. Պատրիարքը կարևորութիւն չը տուաւ ասոր և իրօք ալ ըստ իրական պէտք չէր կարևորութիւն տալ, զի ո՞վ կրնայ ընդունիլ այն սկզբունքը թէ՛ Երեսփոխանական ժողովը իր դիւանն ընտրելու ազատ չըլլայ և կամ իւր այդ ընտրութեանը համար իրմէ գուրս մարունոյ մը պատասխանատու ըլլայ: Խնդրագիրը տրուողներէն մէկը ձայն կը բարձրացնէ այդ կարևորութիւն չը տրուելուն դէմ: Իրէկձեան Էֆ. Խնդրագիրը մատուցանողներուն դէմ պատասխան մը տրուելու հարկը կը փաստարանէ. ժողովը անոր այս յայտարարութիւնը զրգոխ ըմբռնելով, դիւանի կողմէն ազդարարութիւններ կըլլան ի կարգ հրաւիրելու չափ յառաջանալով ձայները կը բարձրանան: Փափագեան Էֆ. անկարգութեան առաջքն առնելու համար իբր զօհողութիւն՝ դիւանէն վար կիջնէ բաց Ս. Պատրիարքը չը թողուր, այլ կտտիպէ որ իւր պաշտօնը վարէ այս շրթութեան մէջ Կրօն. ժողովոյ ընտրութեան քուէթղթերը կը բաժնուին քննիչները կը կարգուին և քուէհամարը կատարելով հետեւեալ արդիւնքը կունենայ որով Կրօն. ժողովոյ 14 անդամներն ալ բացարձակ առաւելութեամբ կընտրուին:

Խ. Վ. Կիւրօեան	Քուէ	44
Ներսէս Վ. Այլանեան	"	42
Տ. Գրիգոր Աճէմեան	"	42
Կարապետ Վ. Սերոբէան	"	41
Յովհաննէս Վարդապետ Փափագեան	"	41
Գէորգ Վրդ. Սամաթիոյ	"	39
Խորէն Եպիսկոպոս	"	33
Տ. Արիստակէս Սամաթիոյ	"	33
Տ. Սուքիաս Մայր Եկեղեցւոյ	"	31
Տ. Վրդանէս Միջազիւղի	"	29
Ամբրոսիոս Վրդ. Իսկէնտէրեան	"	26
Զաքարիա Վրդ. Զիւմիլութեան	"	25
Տ. Երեմիա Խաչիկի զի	"	25
Տ. Գրիգոր Արամեան	"	24
Այս միջոցին Խրիմեան Վանցի մը ժողովէն		